# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720

## Ո Ր Ո Շ Ու Մ

« 27 » Սեպտեմբերի 2012 թվականի N 18 -Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Սիս համայնքի 2012 թ-ի բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները : 2012թ-ի վարչական բյուջեի 10.7.1 սոցիալական հատուկ արտոնություններ հատվածի 4726 հուղարկավորության նպաստներ հոդվածը պակասեցնել 235.0 հազար դրամով: 2012 թ-ի վարչական բյուջեի 1.1.1 Օրենսդիր և գործադիր մարմիններ հատվածի 4212 էներգետիկ ծառայություններ հոդվածը ավելացնել 235.0 հազար դրամով:

Ավագանու անդամներ՝

**Կողմ (4)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ն. Սեյրանյան
Ա. Բեգունց
Յ. Մելքոնյան
Ռ.Աքասյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2012 թ. Սեպտեմբերի 27
գ. Սիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Միս համայնք, գ. Միս, հեռ. 077-200-720

## Ո Ր Ո Շ Ու Մ

« 27 » Սեպտեմբերի 2012 թվականի N 19 –Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԸ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1- ին մասի 20-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի » 63 հոդվածի 3-րդ և 67 հոդվածի 2-րդ կետերի պահանջներով, Միս համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի անշարժ գույքի հատակագծին համապատասխան / ծածկագիր 03-083-0003-0001 / հողամասից առանձնացնել մեկ միավոր 0.0527 հա, աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու նպատակով:

1. Համայնքային սեփականություն համարվող 0.0527 հա բնակելի կառուցապատման հողակտորը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Օտարվող հողամասի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100% - ի չափով:
3. Օտարվող հողամասի առավելագույն չափ սահմանել 0.0527 հա:
4. Քայլի չափը սահմանել նվազագույնը ՝ 20,0 հազ.դրամ:

Ավագանու անդամներ՝

| Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|

Ն. Սեյրանյան
Ա. Բեգունց
Յ. Մելքոնյան
Ո.Աբասյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2012 թ. Սեպտեմբերի 27
գ. Միս